**ՆՈՐ ԱԿՈՒՆՔ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**

Հայաստանի Հանրապետություն

**NOR AKUNQ**
**Closed Joint Stock Company**

Republic of Armenia

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի շրջանակներում գրանցված
մասնակիցներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-<<-->> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Արմավիրի մարզի, ք. Արմավիր ՛՛Նոր Ակունք՛՛ ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները:Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում<<ՀՀԳՆՋՏՊԿ-ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-<<->>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտըն (բնօրինակ և 2 օրինակ պատճեն) անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք, Մաշտոցի 59 հասցեով, 2-րդ հարկ, N 202/1 սենյակ, ոչ ուշ քան 2015թ. փետրվարի 23-ը, ժամը 11⁰⁰ -ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Արտավազդ Անտոնյանը:

Հայտերը կբացվեն ՛՛ Նոր Ակունք՛՛ ՓԲԸ –ի վարչական շենքում ՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Մաշտոցի 59 հասցեով 2-րդ հարկի N:202/1 սենյակում, 2015թ. փետրվարի 23-ին, ժամը 11⁰⁰-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՛՛Նոր Ակունք՛՛ ՓԲԸ-ի կարիքների համար վառելիք տեսակի ապրանքների ձեռքբերումը:

՛՛Նոր Ակունք՛՛ ՓԲԸ-ի կարիքների համար՝ վառելիք տեսակի ապրանքների (որը կազմված է՝2 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) (Հավելված N1,N2,N3)

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

՛՛ Նոր Ակունք՛՛ ՓԲԸ –ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arto33@mail.ru:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

Առդիր՝12թերթ:

*՛՛Նոր Ակունք ՛՛ՓԲԸ միջազգային Գլխավոր տնօրենի տեղակալ՝*

*Ա.Թորոսյան*

*Կատ.՝ Ա. Անտոնյան*